

Աստուածածինի հին պատկեր մը՝ գացած է Տրապիզոն (Արեւլ վրդ. Մխիթարեանց, Վեպ Գաղթականութեան Հայոց ի Տրապիզոն. 1857 Կ. Պոլիս, էջ 41 և 135):

Հոն 1698ին ականատես կ'ըլլայ նահատակութեանը Կորպեա անուն պատանիի մը, որուն մարմինը նոյն թուականին տեղւոյն Ամենափրկիչ վանքի Յակոբ առաջնորդին հետ ի միասին կ'ամփոփէ յատուկ դամբարանի մը մէջ:

Այս նկատմամբ Տրապիզոնի Չարխափան եկեղեցիին Յայտաւորքին մէջ (Յունուար ԻԶ), վրկայարանսւթեան ծայրը ինք գրած է հետեւեալ տողերը. «Ես, Յովհաննէս վարդապետս, որոյ մականուն Թուրունջի կոչի, եւ առաջնորդ սուրբ Ամենափրկչին Յակոբ վարդապետ՝ եղեալ ականատեսս այս սուրբ նահատակիս, եւ ես Յովհաննէս արեպիսկոպոս ոսիւք ի մովք ընթացայ եւ գրկախառն համբուրեցի, եւ փափագ ճնողացն բազում խրատիւք մխիթարեցի: Եւ յերոզ աւուրն յեք թաղմանն ես Յովհաննէս վարդապետս՝ սեսի լոյս ի վերայ գերեզմանին ... քվին Ռձևե: (=1698)» (տես Արեւլ Մխիթարեանց, Վեպ Գաղթականութեան Հայոց ի Տրապիզոն. Կ. Պոլիս 1857. էջ 42-43. և Հ. Ներսէս վ. Ակինեան, Գաւազանագիրք Կարողիկոսաց Աղթամարայ, Վիեննա. 1920, էջ 141-142): Յովհաննէս Թիւթիւնճի կ'երեւի թէ անկէ վերջ Տրապիզոն ապրած է և հոն վախճանած իր գերեզմանը Չարխափան եկեղեցիին շրջափակին մէջ կը մնար մինչև անցեալ դարուն կէսերը՝ հետեւեալ արձանագրութեամբ (տես Արեւլ վրդ. Մխիթարեանց. նոյն, էջ 132):

Այս է տալան Սուրբ Էջմիածնայ նուիրակ Յովհաննէս եպիսկոպոսին, որոյ ձեռամբ եկեալ Ամենափրկչի վանից Սուրբ Աստուածածնի պատկերն ... Խաչկալն եւ մարիամու Սուրբ Աստուածածնայ Խաչկալն, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. բուին. ՌձՄԻ. (= 1703):